

և Երզ մը, որուն սկզբն է՝ «Եղբայրք շատ բարեւ լալով թէ յաշխարհիս ոնց կայք դուք բարով» (Մուսանձտեանց, Մանանայ, էջ 264. Հայերգ, էջ 129, 167. Բանբեր, Ա.—Բ, 1921—1922, էջ 128 և Macler, Notices des man. arm. dans quel. Bibl. de l'Europe centr. էջ 149—164):

4. Ատոմ վարագեցի: տաղասաց, կենսագրական գծեր կը պակսին. ԺՆ. դարուն ապրած: Իր տաղերէն երկուքը հրատարակուած՝ «Արարատ»-ի մէջ 1902, էջ 447—451: Իր «տաղ Յովհաննու Ոսկերերանի» կը դըտնուի մեր Թ. 577 Ձեռագրին մէջ:

5. Յովհաննէս վարագեցի տաղասաց, որ ունի՝ «Տաղ գեղեցիկ և լա... վասն ծննդեան Գրիտոսի...», «Յայն առաւօտին, ասեղ գիշերին եղնին էր ծնել խայթհոյթ մեր (մէր) բերել»<sup>57</sup> (Karamianz, Verzeichnis der arm. Handschriften zu Berlin, Berlin, 1898, էջ 68): Գուցէ սա է Փիլոզալէմեանի յիշած՝ «Յովհաննէս հանճարեղ և գրագետ վարդապետ» 1597ին կը ծաղկի ի վարագ» (Դիւան, Ժ., էջ 502):

Ժդ. Տէր Յուսիպն որդւոյ վանքի մէջ կը ծաղկի Ստեփանոս Տէր Յուսիպն որդի, որուն կենսագրութիւնը ընդարձակօրէն տուած ենք (հմմտ. ՎՎՎ., Ա., էջ 359): Ունի՝ «Խրատ հաւատացելոց վասն վերջին դալտեան. ի մէջ գիշերի կացեալ Գարբէլի» (հմմտ. Տէր Մկրտիչեան Գ., Հայկականք Բ., Վաղարշապատ 1899, էջ 81—87):

Ժե. Սխանչեալգործի վանքէն է՝ Յակոբ Եպ. Նետրաբնց, ծնած Արծկէի մէջ, որդի՝ Ներսէս քահանայի և Խաթուն Մելիքի: Կամուսնանայ Մեհրուբանի հետ, սակայն անոր տարածամ մահէն յետոյ կ'առանձնանայ Ս. Սքանչելագործի վանքը, ուսկէ կը բարձրանայ Բղնունեաց եպիսկոպոսական աթոռը: Կը մեռնի 1501ին: Նկատողութեան արժանի տաղասաց է: Անոր կենսագրութեան ու գրութիւններու մասին հմմտ. Ակինեան Հ. Ն., Մատենագրական հետազոտութիւններ, քննութիւն և բնագիր, հատոր Գ, Վիեննա 1938, էջ 119—138):

<sup>57</sup> «Գեղունի» մէջ 1905, էջ 6—9, կը հրատարակուի ողբերգութիւն մը «Յովհաննէս վարդապետի վարագացու եղբոր» որ նորագոյն շրջանի գործ է: Բարսեղ վարագեցին ունի ընդարձակ յիշատակագրութիւններ (հմմտ. Դիւան, Ժ., էջ 38—35 և ՎՎՎ., Ա., էջ 114, 311):

Ժզ. Յիպնայ վանք՝ Գրիգոր՝ Խլաքեցի Մերեմց, յորջորջուած ծննդավայրի և հօրը անունովը (Խլաթ և Մեր) Յիպնավանքի մէջ վարդան ճղնաւորի կ'աշակերտի: Ապա իր ուսումը կը կատարելագործէ Յովհաննէս Որոտնեցիի մօտ Ապրակունեաց վանքի մէջ և Սարգիս վարդապետի քով Սուխարայ վանքի յարկի տակ: Վերադառնալով Յիպնավանքը կը «ժողովին առ նա բազումք ի կրօնաւորաց և յուսումնասէր եղբարց»: Նմանապէս ուրիշ վանքերու մէջ ևս աշակերտներու ուսում ջամբելով կը զբաղի: Սակայն ևս այնպէս կը թուի թէ անոր ժամանակին կարեւոր մասը լեցուած է կարդալով, զրքեր արտագրելով՝ զըջագրութեամբ («տիւ և գիշեր գիրս զրէր»), և նմանապէս նկարելով: Իրբեւ 75 ամեայ ծերունի Յիպնայ Ս. Ստեփանոսի վանքի մէջ կը նահատակուի (Թովմ. Մեծօրեցի, էջ 41—43):

Նա կոչուած է «Երկրորդ Վկայասէր», վասն զի Յայսմաւուրքը կ'ընդարձակէ նորանոր յաւելումներով: Դարձեալ՝ կը զրէ Պատմութիւն մը, որ դեռ երեւան չէ ելած, ձառեր՝ քանի մը հատ, «Յիշատակարան աղետից», «վասն Մովսէսի գրոյն», թուղթեր. հանելուկներ, Ողբ ի նահատակութիւն Թէոզորոս կաթողիկոսի: Գրիգոր Խլաթեցիին շատ բան կը պարտի հայ «Գանձարան»ը: Նա է որ հայկական հին գանձերէն շատերը, որոնք զուցէ մոռացութեան պիտի մատնուէին, հատորի մը մէջ կ'ամփոփէ: Ինքն ալ կ'երգէ ու մեղի կը թողու քանի մը գանձերը (Չարբհանչեան, Պատմ. հայկ. հին դպրութեան, Բ., էջ 194. Արշան, Հայսպատում, Ա., էջ 311. Արարատ, 1897, էջ 412 ևն. Տաշեան, Մայր Յուց., էջ 479. Բանասէր, 1905, էջ 97. Աղբիւր, 1889, էջ 127 ևն ևն):

Ժէ. Սալնաձորի վանքերու մէջ աւելի իբրեւ քարոզիչ և ուսուցիչ քան գրող անուն կը հանեն՝ Բարսեղ Աղբակեցի, վարդապետ վարդապետ, Յովհաննէս Կոլոտ, Գրիգոր Շրթացակեր, Ներսէս Ամկեցի ևն: Յաւելումք՝


Շատ բնական է որ վանքերու մէջ տեղի ունեցած լաւ բաները — անբասիր կեանք, բարեկարգութիւն, գիտութեան սէր ու զարգացում, նաեւ աւանդուած սքանչելիքներ ու հրաշքներ — հայ մատենագիրներու և գրողներու — մանաւանդ բանաստեղծական

թուիչքով օժտուածներու — և հետտորնեւ միտքն ու սիրտը յուղէին՝ դանոնք հրաշակելու, պանծացնելու և յաւերժացնելու: Եւ ասա ունինք՝

ա. (Սարգիս Գլիոցիէն) «Ներբող ի Լմայ անապատն» (ՎՎՎ., Ա., էջ 25):

բ. (Ներսէս Մոկացիէն) «Ներբող յաղազս շինման և հաստատութեան Լմայ ծովապատ անապատին Ս. Գէորգայ...» (ՎՎՎ., Ա., էջ 21, ծն. 13):

գ. «Դրութիւն դրուատման բանից զովականաց առ հրեղինակիր անապատն Կոտուց և առ ի նմա բնակեալ խարաղնազկեցիկ միանձանցն ջոկս աստուածագումար հարց»<sup>58</sup> (ՎՎՎ., Ա., էջ 58 և 85):



Կարմրաւոր Ս. Աստուածածնի վանքը (ՎՎՎ. Ա. էջ 236)

դ. (Փիլ. Մոկացիէն)՝ «Տաղ Աղթամարայ սուրբ Խաչին» (անդ, էջ 100):

ե. (Յովհ. Գեղեղեքեանց Պողոսեանցէ)՝ «Ճառ ներբողինի և դրուատ գովեստի սրբոյ և մեծի աթոռոյն վարագայ»<sup>59</sup> (անդ, էջ 269):

զ. (Յովհ. Բրգութեանցէ)՝ Տաղ մը ևս գանձ մը՝ «Ի գետարդել Ս. Նշան» (անդ, էջ 269):

է. (Չարբիա վարագացիէ)՝ Տաղ՝ «Չվարագն ասեմ զրաղձալին» (անդ, էջ 268, 310):

ը. (Յովհ. քհ. Վանանդացիէ)՝ «Ճառ ներբողեան ի սուրբ Խաչն Քրիստոսի և պատմագրական աստացութեան ի սուրբ Նշանն վարագայ» (տպ. Մոսկուա 1853):

<sup>58</sup> Ձեռագրի մը մէջ կայ ոտանաւոր մը՝ «վասն զնալոյն մեր ի Կոտու անապատ(ի)ն, որ ծովը գմեղ արդեկոյր» (Արարատ, 1919, էջ 18):  
<sup>59</sup> Օրինակ մը Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ մէջ (Հայ Խօսնակ, 1925, էջ 196):

բ. «Գանձ վարագայ սուրբ Նշանին. — Գլուխն եկեղեցւոյ, վէմն հաւատոյ...» (Տաղ) Այսօր մեծ զարմանք հրաշից յայտնեալ... փոխէ. Ամփոփեալ գնշան խաչին ի վաստուրական երկրին» (Սիւրմէեան, Յուց. հայ. Ձեռ. Հալէպի, Ա., էջ 149):

ժ. Գանձ Մեծօրի մասին (հմմտ. Աճառեան Հ., Յուց. հայ. Ձեռ. Թարբիդի, էջ 36. ՎՎՎ., Բ., էջ 437. Իսկ Սիմ. Ապարանեցիի գրութիւնը հմմտ. ՎՎՎ., Բ., էջ 437):

ժա. Յակոբ Նետրաբնցէ գանձ մը ևս երկու տաղ ի Սքանչելագործ Ս. Նշան (հմմտ. ՎՎՎ., Բ., էջ 451):

ժբ. (Սիմէոն Ապարանեցիէն)՝ «Յիշատակարան շարադրութեան և պատմութիւն Ապարանից սուրբ Նշանի» (Հանդ. Ամս., 1943, էջ 72):

ժգ. (Բարթոլոմէոս Վ.է) Տաղ՝ «Ի Կարմրաւոր Ս. Աստուածածին» (ՎՎՎ., Ա., էջ 236):

ժդ. Յակոբ Թօփուզեան կը զրէ Լիմի պատմութիւնը (ՎՎՎ., Ա., էջ 43—44):

(Շարունակելի:) ԳԿՏ. Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՎԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԵՕԹՆԵՐՈՐԳ ԳՆՐՈՒ ՍԿԶՐԸ**  
**ՆՊԵՍՍ ՄԸ ՀԱՅՈՑ ՏՕՆՆՈՑՅՅԻ ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԵԱՆ**

(Շարունակութիւն:)

2. Տօն սուրբ Աստուածածնի:

Յանկս իր երկրորդ Բաթնին մէջ կը նշանակէ. «Բ. Չատկէն ի վեր կիրակէքն ամենայն. Տօն Ս. Աստուածածնին և տօն վարդապետին, բաց ի մատաղենեացն, որ է կատարումն Բառասնորդացն Առաքելական տօնիցն Հաւատացելոց Չատկին» էջ 113—114): Այս «Բ. Չատկին» առանց տարակուսի Պենտակոստէն է, որ նաեւ «Հաւատացելոց Չատկի» կ'անուանուի. «Հաւատացելոց Չատկի» կ'անուանուի. «Բ. Չատկէն ի վեր կիրակէքն» կը սկսին Պենտակոստէնէն ետքը Ա. Կիրակիէն: Այս կիրակիներուն ժողովուրդի նուէրները կը պատկանին ամուսնացեալ քահանաներուն, բացի այն մատաղենիքներէ որոնք կ'ընծայարեւրուին Ս. Աստուածածնի և

Վարդավառի տօներուն, որոնք կ'իյնան «Հաւատացելոց Չատկի» Բառասներորդքին: Այս Բառասներորդքն է «Առաքելոց տօնից Բառասներորդք» կոչուած պահքը, որ կը սկսի Պենտակոստէէն ետքը եւ կը տեւէ մինչեւ Վարդավառ: Այս նկատումով Աստուածածնի տօնը կը տօնախմբուէր, մասնաւոր ուխտադնացութեամբ, զինի Պենտակոստէից Ա—Ձ Կիրակիներէն մէկուն մէջ (Մայիս 17—25 Յունիս շրջանին): Ճշդիւ կարելի չէ մտնանել թէ ո՞ր կիրակին է այդ: Դրացի Եկեղեցիներու մէջ նման տօն մը կը յիշուի Մայիս 15ին իբրեւ «Աստուածածնի Հասկաց»: Այսպէս Յակոբիկեան Տօնացոյցը կը նշանակէ Մայիս 15ին «Տօն Աստուածածնի» (Տօնացոյց Գ եւ Դ.), որ նաեւ «Աստուածածնի Հասկաց» կը կոչուի (Տօնացոյց Ե—ԺԲ), անշուշտ «ցորենահասկաց», վասն զի Տօնացոյց Ձ. Յունուար 15ի Աստուածածնի հին տօնը ներկայացուցած է «Աստուածածնի Սերմանեաց», իսկ Տօնացոյց Ժ. Օգոստոս 15ին կը նշանակէ «Աստուածածնի Որթոց»<sup>1</sup>: Այլերունի<sup>2</sup> կը գրէ թէ Մելքիսեաները այդ տօնը կը տօնեն Մայիս 15ին իբրեւ «տօն Վարդից», զոր յառաջագոյն Մայիս 3ին կը տօնէին: Արգեօք Մելքիսեաները Յակոբիկներէ՞ առած են տօնս եւ անոնցմէ տարբերուելու համար «Տօն Վարդից» կոչած: Ունի՞ այս տօնը որ եւ է կապ Հայոց Նաւասարդ 15ին տօնած տօնին հետ: Հաւանօրէն ոչ, կը պատասխանէ Հոլլ. վարդը մէկուն քով սպիտակ է, միւսին քով կարմիր<sup>3</sup>: Ընդհանրապէս ընդունուած էր, գոնէ Դ. դարէն սկսեալ, տօնել Աստուածածնի տօնը Յայտնութեան տօնին կից: Այսպէս Անտիոքի Սեւերոս պատրիարքը (512—518) իր Ատենարանութիւններուն մէջ կը յիշէ, թէ յԱնտիոք Աստուածածնի տօնը կը տօնուէր Յայտնութենէն ետքը: Ուրիշ աղբիւր մ'ալ կը վկայէ, թէ Յակոբիկեանները այս տօնը կը խմբէին Յունուար 15ին. իսկ Սպարտները՝ 16ին: Բայց Յակոբիկներու 675ին գրուած Տօնացոյցը կը նշանակէ զայն Դեկտեմբեր 26ին: Նոյնպէս զիտէ նաեւ Նեստորական-

ներու Բացայայտութիւնն պաշտամանց, որ Մարեմայ տօնը Դեկտեմբեր 25էն վերջը կը զետեղէ. բայց ուրիշ տեղ կը յիշէ այդ տօնը «յետ ընծայից մոգուցն», այս ինքն Յունուար 6էն ետքը: Վերջին տեղիքս մնացորդ մըն է անշուշտ հին աւանդութեան. իսկ տօնին Դեկտեմբեր 25էն վերջը զետեղելն արդիւնքն է Ծննդեան տօնին փոխադրութեան<sup>4</sup>: Կրնանք անվերապահ ըսել, թէ Արեւելեան Եկեղեցիներն յԱղեքսանդրիա եւ յԱնտիոք Դ. դարուն Աստուածածնի տօնը կը տօնախմբէին Յայտնութեան Երկրորդ օրը: Այսպէս նաեւ Հայոց Եկեղեցին, որ Յայտնութեան Բ. օրը Աստուածածնի եւ Գ. օրը Աւետաց յիշատակը կ'երգէ իր Շարականներուն մէջ: Յովհաննէս Օձնեցի կը յայտարարէր. «Աւետիքն եւ Ծնունդն եւ Մկրտութիւնն Քրիստոսի ի միասին առեալ» տօնախմբեմք: Բացառութիւն կը կազմէր Երուսաղէմեան Եկեղեցին: Իբր 460ին յօրինուած Երուսաղէմեան ձաշոցը, որ հասած է մեղի հայերէն թարգմանութեամբ, Աւգոստոս 15ին կը նշանակէ այսպէս<sup>5</sup> «Աւգոստոս ամսոյ որ օր ԺԵ. Մարիամայ Աստուածածնին: Յերկրորդ մղոնին Բեթղեէմի. եւ այս կանոն կատարի: Սղմ. ձՂԱ. Կց. Արի, Տէր, ի հանդիստ քո: Ընթերցուած յեսայայ մարգարէէ. Եւ յաւել Տէր խօսել ընդ Աքաղու...: Ի Դաղատացոց թղթոյն Պաւղոսի առաքելոյ Ընթերցուածս. Ապա թէ դուք Քրիստոսի էք: Այլէլուրա. Սղմ. ձԹ. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ...: Աւետարան ըստ Դուկայ. Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ հրաման...»: Թէպէտ Աւգոստոս 15ին կը նշանակուի տօնս, բայց Աւետարանի Ընթերցուածէն կը տեսնուի, թէ նախնարար տօնուած է Յայտնութեան տօնին հետ: Թէոդորոս կրօնաւորի ի Ս. Թէոդորոսի ներբողէն (530) կ'իմանանք, թէ սովորութիւն էր Երուսաղէմ տօնել տօնս տարուէ տարի<sup>6</sup> նոյն Աւգոստոս 15ին: Է. դարու սկիզբը, երբ Մաւրիկ կայսր (582—502) հրամայեց, որ Աստուածածնի Վերափոխումը տօնուի հանդիսապէս<sup>7</sup>, նախընտրուեցաւ տօնախմբել զայն

<sup>1</sup> Patrologia Orientalis, X, 41—121:  
<sup>2</sup> Chronology of ancient nations, ed. Sachau, էջ 295. Հմմտ. նաեւ 292:  
<sup>3</sup> Karl Holl, Die Entstehung der vier Fastenzeiten in der griechischen Kirche, Berlin 1924. (Abhandlungen der preussischen Akademie der Wissenschaften. Jahrg. 1923. Phil.-hist. Klasse, Nr. 5) էջ 18, ծան. 1:

<sup>4</sup> Համեմատէ այս խնդրոյ մասին մանրամասն K. Holl, անդ, էջ 11—19:  
<sup>5</sup> Վիեննայի Միթթ. ձեռագրաց Թ. 3:  
<sup>6</sup> H. Usener, Der hl. Theodosios, Leipzig 1890:  
<sup>7</sup> Նիկիոքի Կալիստոս է, որ կը հազարգէ, թէ Մաւրիկ կայսր հրամայած է տօնել Ննջման Ս. Աստուածածնի տօնը Աւգոստոս 15ին. Migne, Patr. Gr. 147, էջ 292:

Աւգոստոս 15ին, երբ Երուսաղէմեան Եկեղեցին ունէր արդէն Աստուածածնի տօն մը: Կը յիշուի, թէ Սարգիս Ա. Հոռմի պապին (687—701) օրով կը կատարուէր Վերափոխան տօնը նոյն ամսոյն 15ին Հոռմ, ընդունուած անշուշտ արդէն անկէ յառաջ: Սպարտները, որոնք Աստուածածնի Ննջման տօն մ'ունին Յունուար 16ին, Վերափոխումը կը տօնէին Օգոստոս 9ին<sup>8</sup>:

Հայերը թէպէտ Ձ. դարուն ընդունած էին Երուսաղէմեան ձաշոցը, բայց չկայ որ եւ է յիշատակութիւն, թէ Աւգոստոս 15ին տօնած ըլլան «Մարիամ Աստուածածնի» տօնը: Նոյնպէս յայտնի չէ, թէ Ե՞րբ մուտ գտաւ Հայոց քով Աստուածածնի Վերափոխման տօնը, զոր սովոր է տօնել Հայոց Եկեղեցին Աւգոստոս 15ին մերձաւոր կիրակի մը:

Այս խորհրդածութիւնները թոյլ կու տան մեզի հաստատուելու, թէ Հայոց «Ս. Աստուածածնի տօնը» յետ Պենտակոստէից եւ նախ քան Վարդավառը, նոյն է Ասորոց «Մարիամ Աստուածածնի Հասկերու» տօնին հետ ըստ ժամանակին. տօնուած հաւանօրէն Նաւասարդաց տօնից օրերուն: Հայոց Յայտնութեան սխալ մ'ունի իր մէջ. բայց եւ այնպէս կ'երեւայ թէ հայ խմբագրողին «Մատուռն» կոչած ժամանակամիջոցը Պենտակոստէի Ե. կիրակին կ'ենթադրէ:

3. Տօն ամենայն Մարտիրոսաց:  
 «Տօն ամենայն Մարտիրոսաց, զոր Մատուռնս կոչեմք»: Մատուռնի յոգնակի ձեւն է մատուռն (սեռ. մատրան) բառին, որ փոխառութիւն է յունարէն μαρτύριον «վկայարան» բառին: Փաւստոս (Գ. 14) կը յիշէ, թէ «ի մեծի մարգարէարան Մատուռն Յովհաննու, սոյնպէս եւ յԱռաքելարանս Տեառնաշաղկերտացն, սոյնպէս եւ ի վկայարանս Մարտիրոսացն ամի ամի ժողովեալ, զոր տօնին յիշատակի նոցա՝ վաղովեալ, զոր տօնին յիշատակի նոցա՝ խմբուցն զորոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային» ի Տարօն: Այս մասնական, որոշ

<sup>8</sup> Holl, անդ, էջ 18:  
<sup>9</sup> Թ. 7 Վիեննայի Միթթ. ձեռագրաց: Հմմտ. Տաչեան, Յուլիոս, էջ 27:

սուրբերու մասնաւոր տօներէ զատ եղած է նաեւ առանձին տօն մը համօրէն Մարտիրոսաց, որ տօնախմբուած է Յունիս 24էն ոչ շատ վերջը, մասնաւոր թէ անմիջապէս ետքը «ի Վկայարանս Մարտիրոսաց»:

Հայոց Կանոնագրքի խմբագրողը Նիկիոյ Ժողովին Ե. Կանոնը ըստ կամի փոփոխելով կը ձեւէ այսպէս. «Ի տարւոյն երիս ժողովս արասցեն. մի՛ յաշնան ժամու. եւ մի՛ գոր Մատուռն կոչեմք. եւ մի՛ յառաջ քան զԲառասներորդսն. եւ մի՛ յաշնան ժամանակի»: Իսկ Անտիոքի Ի. կանոնը կը հրամայէ ըստ հայերէնին. «Զի ժողով լիցի եպիսկոպոսաց... երիցս անգամ յամին. մինն՝ յերրորդ շաբաթու տօնաց Չատկին. իբրեւ կատարիցի ի Դ. շաբաթու Պենտակոստէին առ ի յիշատակել ժողովոյն յիրս յիշխանութենէն. եւ զերկրորդ անգամ ժողով լինել յերս հոկտեմբերի, որ է Ժ. Հոռի ամսոյ...»: Այս տեղ յիշուած «Գ. շաբաթ տօնիցն Չատկին», եւ «իբրեւ կատարիցի Դ. շաբաթ Պենտակոստէին» թարգմանութեան սխալ մ'ունի իր մէջ. բայց եւ այնպէս կ'երեւայ թէ հայ խմբագրողին «Մատուռն» կոչած ժամանակամիջոցը Պենտակոստէի Ե. կիրակին կ'ենթադրէ:

Թէ կա՞ յին Հայոց քով տարեկան երեք ժողովներ, չունինք որ եւ է տեղեկութիւն հին աղբիւրներէ: Սահակայ ընծայուած կանոնը կը հրամայեն. «Պարտ եւ պատշաճ է յամենայն տարւոյ, յորժամ ժողովը կատարիցին ըստ կանոնական սահմանադրութեանց, չըլել քորեպիսկոպոսին ի հաւատացեալս նոցա յեկեղեցիսն եւ քննութիւն անել վարուց եւ կարգի պաշտամանն» (էջ 82). առանց ժամանակի մասին որ եւ է ակնարկութիւն ընելու: Փաւստոս Գնելի պատմութեան մէջ կը յիշէր, թէ Նաւասարդի օրերուն, յատկապէս Յովհաննու Մկրտչի Ծննդեան տօնին, յունիս 24ին, Բագաւան ժողուած էին «բաղում եպիսկոպոսք որ յայլոց դաւառաց» (Գ. 15): Հաւանօրէն անոնք ուխտի համար միայն եկած չէին հոն: Գիտենք թէ 444ին Շահապիվանի ժողովքը դումարուած էր «ի նորարեր տօնին», այն է Նաւասարդաց օրերուն, երբ կը հանդիպէր Յովհաննու Մկրտչի Ծննդեան Տօնը: Ուստի հարկ է Նիկիոյ եւ Անտիոքի Կանոններու հայ խմբագրին աւելցուցած «եւ մի գոր Մատուռն կոչեմք» ժամանակաշրջանը՝ խմա-

նալ Հայոց Նաւասարդի օրերը, մօտաւորապէս Յունիս 24ի շրջանը, թէ եւ Հայ Տօնականները «Տօն ամենայն Մարտիրոսաց» կ'ենթադրեն Յայտնութեանէն ետքը եւ Տեառնընդառաջէն յառաջ:

Փաւստոս Գ. 11 յառաջ կը բերէ Ս. Վրթանէսի ներքողականը, ուր «ի մեծի պատերազմի Պարսից եւ Հայոց ընդ միմեանս» ինկած քրիստոնեայ նահատակները դրուատելով կ'ըսէ Ս. Վրթանէս ի մէջ այլոց. «Արդ մի լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ճշմարտութեանն առ նահատական. դիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտեանից, զի ամենայն ոք գտցա յիշատակ քաջութեան իբրև Բրիտանի նահատակաց՝ անխափան կատարեսցէ: Եւ մեք տօնս արասցուք եւ ուրախ լիցուք...: Եւ եդ օրէնս ընդ աշխարհն մեծ քահանայապետն Վրթանէս [զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. եւ որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանելիցն ի նմանութիւն նոցա. եղ կանոն] յիշել զտօսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ի ժամ պատարազին, յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն. եւ ապա զկնի նոցա զնոցայն»: Այս խօսքերը կ'ենթադրեն Հայ Եկեղեցական տարւոյն մէջ «Ամենայն Մարտիրոսաց» տօն մը, թէեւ մատնանիշ չեն ընէր օրը, երբ կը տօնախմբուէր այն:

Քառակուսի փակագծի մէջ առնուած տողերը յայտնապէս յաւելուած են ուրիշ գրէք եւ կը հային Վարդանանց պատերազմներու (451 եւ 572): Վերջնոյս համար ունինք համապատասխան տեղիք մը եղիւն վարդապետի «Հայոց Պատերազմի պատմութեան» մէջ, ուր, առթիւ 572 Փետրուար 2ի պատերազմին, ըսուած է. «Իբրեւ այս ամենայն աջողութիւն լինէր երկիւղածացն Աստուծոյ, ամենայն եպիսկոպոսունք եւ երկցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին... զտօն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին» (էջ 139): Մարտիրոսներու յիշատակն «խառնել ի սուրբ տօն Յայտնութեանն» կը նշանակէր տօնել Յունուարի ընթացքին: Ասկէ թերեւս Տօնականի յիշատակն, զոր վերագոյն յիշեցինք: Այս չէ սակայն Սահակի ընծայուած կանոններու «Տօնն ամենայն Մարտիրոսաց», որ կը յաջորդէր Յովհաննու Մկրտչի տօնին:

Ճիշդ այս շրջանին այսինքն Վարդապետն յառաջ, կը տօնէին «Ամենայն Մարտիրոսաց յիշատակը» նաեւ Ասորիները, ինչպէս կը տեղեկանանք Կարխայի Վկաներու պատմութեանէն: Կը գրէ վկայագիրը. «Կարդարած են մեր Նախահայրերը, որ (Առաքելոց տօնի) Նախատօնակին տօնախմբուի այն ականաւոր Մարտիրոսներու, Մետրապոլիտներու, Եպիսկոպոսներու, Սարկաւաղներու եւ 12.000 օրհնեալ հօտին յիշատակը, որոնք պսակուեցան Քրիստոսի համար: Իսկ Ս. Առաքելներու յիշատակի շարաթ օրը տօնուի Մարտիրոսներու յիշատակը, որոնք անոնց երեւելի նախահայրերն եղան<sup>10</sup>»: Առ այս կը ծանօթագրէ Հովհանն. «Այս տեղեկութիւններու համաձայն Մարտիրոսներու յիշատակը կը կատարուէր Առաքելներու պահէին 2. շարաթուան Ուրբաթ եւ Շաբաթ օրերը<sup>11</sup>: Առաքելոց պահէր կը սկսէր Պենտեկոստէի երկուշաբթի եւ կը տեւէր 7 շաբաթ եւ նոյն շաբաթուան շաբաթ օրով կ'աւարտէր: Յաջորդ կիրակի օրը, որ է մեր (լատինական) է. կիրակին յետ Պենտեկոստէից, կը տօնախմբուէր ԺԲ. Առաքելներու յիշատակը»: Այս միջոցն է Հայոց «Քառասնորդք Առաքելական տօնից», որուն վրայ պիտի խօսինք քիչ յետոյ:

Յեցած ասորական այս հին սովորութեան վրայ, կրնանք վստահօրէն ըսել թէ Հայոց ալ Ամենայն Մարտիրոսաց տօնը կը կատարուէր յետ Պենտակոստէից 2. Կիրակի (Ուրբաթ եւ) Շաբաթ օրը: Յունաց Եկեղեցին *τοιοσχη τῶν ἁγίων μαρτυρησάτων*, «Կիրակի սրբոց վկայելոց» կ'անուանէ յետ Պենտակոստէից Ա. Կիրակին: Ամենայն Մարտիրոսաց ի պատիւ ճառեր խօսած են Ս. Եփրեմ եւ Յովհ. Ոսկերեան:

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

<sup>10</sup> G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer. Leipzig 1880, էջ 60:  
<sup>11</sup> Հ.մ.ա. Assemani, Bibliotheca Orientalis, Գ. 2, էջ 383, 387 եւ Աւրերուսի:

ՀՆՅ ԺԱՅՈՒՄԷ՞ ԻՐ ՄՕՐԻԿ ԿԱՅՐ

Ընդհանուր պատմութեան թատերաբեմին վրայ երեւցող աչքառու դէմքերէն է Մաւրիկիոս Կայսր (580—602): Հայ աւանդութիւնը զինքը ծագումով Հայ կը ճանչնայ: Ուրիշներ յոյն, նոյն իսկ հռովմայեցի գիտեն: Այս խնդրի լուսարանութեան նուիրուած է Paul Goubert Յիսուսեան Հօր Maurice et l'Arménie. Note sur le lieu d'origine et la famille de l'Empereur Maurice յօդուածը Échos d'Orient թերթին մէջ 39 (1941/42), 333—413: Այս շատ շահեկան ուսումնասիրութիւնը մեր ընթերցողներուն ծանօթացնելու դիտումով, կ'ամփոփենք հոս անոր կարեւոր բովանդակութիւնը:

Հա՞յ է Մօրիկ: Հայ աղբիւրներու համաձայն հաստատական է պատասխանը<sup>1</sup>: Նոյն կարծիքը յայտնած են նաեւ քանի մը եւրոպացի պատմագէտներ<sup>2</sup>: Օտար աղբիւրներէն միայն Գէորգ Կրօնաւոր<sup>3</sup> եւ Յովել<sup>4</sup> կու տան Մօրիկի Հայ ծագում, նոյնպէս Հայ կը ճանչնայ զինքը ԺԳ. դարէն յայն Գիւրգիւր մը<sup>5</sup>:

Ծննդավայր: Հայ պատմիչները Արագածոտնի Օշական աւանը ցոյց կու տան անոր հայրենիքը<sup>6</sup>, իսկ Կիրակոս Գանձակեցի լսած է թէ ուրիշներ Տարօն ծնած է կ'ըսեն (տպ. Վենետիկ 1865, էջ 27): Շապուհ Բագրատունիի ընծայուած պատմութիւնը կը հաղորդէ թէ Մօրիկի հայրը Գաւիթ, Անիի մէջ պարտիզպան մըն էր (տպ. Էջմիածին 1921, էջ 3): Կը հաւաստուի նաեւ թէ Անիի մօտակայ Շիրակաշատ քաղաքին անունը փոխուած ըլլայ Մարիկոպոլիս<sup>7</sup>: Մօրիկի անունով եպիսկոպոսանիստ քաղաք մ'ալ կը

<sup>1</sup> N. Adontz, Les légendes de Maurice et de Constantin V. empereurs de Byzance, Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire orientales. T. II, 1934, Mélanges Bidez, Fasc. I, 1—14. Հ. Կ. Տէր Սահակեան, Հայ կայսերք Բիւզանդիոնի, Վենետիկ 1905:  
<sup>2</sup> Dr. Martial, Les Peuples du Caucase (Revue d'Anthropologie 1936), էջ 71: J. de Morgan, Histoire du peuple Arménien, Paris 1919, էջ 280:  
<sup>3</sup> Chronicon II, հրատ. Boor, էջ 652, 662:  
<sup>4</sup> Migne P. G., 134, 265.  
<sup>5</sup> A. Wirth, Aus orientalischen Chroniken. Frankfurt 1894.  
<sup>6</sup> Ստ. Ասողիկ, Պետերբուրգ 1885: Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ., 294: Օշականի անունով շրջող առածին մէջ, թէ «Աստի յՕշական խունկ ստաշի» նկատելի է, որ ուղղակի Մօրիկի մասին յիշատակութիւն չկայ, թէպէտ Մօրիկի հետ կապակցութեամբ յառաջ կը բերուի:  
<sup>7</sup> Մ. Խորենացոյ Աշխարհազրուութիւն. Վենետիկ 1881, էջ 34: Հ. Գ. Ալիշան, Շիրակ. Վենետիկ 1881, էջ 16 «Մէլիքի ըստ թուրքաց»:

զանուի միջին Ասորիք, Maurikiupolis<sup>8</sup>. Ուստի այս կրկին նոյնանուն քաղաքներէն ոչ մի հետեւութիւն կարելի է հետեւցնել Մօրիկ կայսեր ծննդավայրի նկատմամբ:

Այսպէս Հայ աղբիւրները: Իսկ յոյն, լատին, ասորի եւ դպտի աղբիւրներ միաբերան Կապադովկիոյ Արաբիստոս<sup>9</sup> քաղաքը ցոյց կու տան Մօրիկի հայրենիքը: Ուշադրութեան արժանի է Ժամանակակից ասորի պատմիչը Յովհաննէս Եփեսացի, որ ամենեւին լուր չունի Մօրիկի հայկական ծագումի մասին, իսկ անոր ծննդավայրը<sup>10</sup> Արաբիստոս կը նշանակէ: Արդեօք յունական աղբիւրներու արձագանքը չէ՞ զոր կը լսենք Կիրակոս Գանձակեցիի մօտ<sup>11</sup>. «Կէսք ասեն զսա յԱրիստոս զեղջէ Կապադովկեցոց զոր յետոյ քաղաք շինեաց զօրավար Տիրերի» (էջ 28—29): Յովհաննէս Եփեսացիի (էջ 206) եւ Միքայէլ Ասորիի (էջ 354) համաձայն կայրը իր Արաբիստոս ծննդավայրը երկու անգամ կառուցանել կու տայ, բայց միշտ զո՞հ կ'ըլլայ աղետալի երկրաշարժներու:

Մօրիկի ընտանեկան ծագումը: Ն. Ադոնց (էջ 7) համաձայնցնել ջանալով Հայ ու օտար աղբիւրներու վկայութիւնները, կը համարի թէ Յունտինիանոսի օրով 536ին, երբ Հայ ստուար բազմութիւն մը գաղթականի ցուպը ձեռին կայսրութեան երկիրները կը գիմէր, փոխադրուած ըլլային նաեւ Մօրիկի ծնողքը Արաբիստոս քաղաքը, ուր աշխարհ կու գայ Մօրիկ:

Օտար աղբիւրները շատ անմիաբան են այս հարցին շուրջ, որովհետեւ մինչ լատին պատմագիր մը Յոյն կը համարի, անդին յոյնը կը հաստատէ թէ Հռովմայեցի է ան:

Այս հարցը ստուգելու համար նկատի առնուելու են միայն Մօրիկի Ժամանակակից պատմագիրները: Հայ աղբիւրներէն Սերէոս եպիսկոպոս որ եւ է յիշատակութիւն չէ ըրած Մօրիկի հայկական ծագումի մասին<sup>11</sup>: Յատկանշական է այս լուրթիւնը:

<sup>8</sup> Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches. Bruxelles 1935, էջ 215:  
<sup>9</sup> Եւազր, Migne P. G. 86, 2832; Պաւղոս Սարկաւազ, Historia gentis Langobardorum, Hannover 1887, էջ 100: Միք. Ասորի, Ժամանակազրուութիւն, Պարիս 1899—1924, էջ 358: Յովհաննէս Նիկիոսցի՝ Պարիս 1899—1924, էջ 523: Արաբիստոս է այսօրուան Եւրբուրգը, Մարաշէն 60 քմ. հիւսիս, Կեսարիայէն Մելիտինէ ճամբուն վրայ: Հ.մ.ա. E. Stein, Studien zur Gesch. d. byz. Reiches Stuttgart 1919, էջ 66:  
<sup>10</sup> Lovaniae 1936, էջ 134, 199:  
<sup>11</sup> Պատմութիւն ի Հերակն. Պետերբուրգ 1879, էջ 19—23, 33—100: